

6920



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
 Շրջակա միջավայրի նախարարի
 պարտականությունները կատարող
 Տրդատ Գաբրիելյան
 « 06.2024թ. »



**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 090 - 24

Նախաձեռնող՝ «ՍՈՒԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
 ք. Երևան, Պուշկինի փ. /շ/ 41/ 22բն.

Գործունեությունը՝ Գագարին բնակավայրի վարչական տարածքում
 Գործարանային փողոց թիվ 7 և 16 հողամաս
 հասցեներում արևային ֆոտովոլտային
 էլեկտրակայանի կառուցում
 Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 090 - 24

«11» հունիսի 2024թ.

**Գագարին բնակավայրի վարչական տարածքում Գործարանային փողոց
թիվ 7 և 16 հողամաս հասցեներում արևային ֆոտովոլտային
էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Գագարին բնակավայր

Ներածական մաս. «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ ընկերություն) նախատեսում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրում կառուցել արևային ֆոտովոլտային էլեկտրակայան: «Փաուեր Էներջի» ՍՊԸ-ն հանդիսանում է արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման պատվիրատուն, որի հիման վրա «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն նախաձեռնել է արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, ենթակայանների, օդային գծի կառուցման և ենթակայանների «Աղթամար» 110 կՎ օդային գծին միացման աշխատանքները:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել նախագծային փաստաթղթերը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականները՝ N 28092023-05-0012, N 02102023-05-0022, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2023թ. նոյեմբերի 15-ին տրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N 0753 լիցենզիան, «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանները՝ N S-110/0131Հ առ 15.02.2023թ. տրված՝ 2024թ. փետրվարի 15, Սևան համայնքի կողմից նախագծման թույլտվությունը՝ N 11, տրված՝ 19.02.2024թ.:

Նախատեսվող գործունեության տարածքի հողերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Նկարագրական մաս. Արևակայանը նախատեսվում է կառուցել Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում՝ Գործարանային փողոց թիվ 7 և 16 հողամաս հասցեներում, որոնք միմյանցից բաժանվում են մոտ 4 մ լայնությամբ



գրունտային ճանապարհով: Թիվ 7-րդ հողամասը զբաղեցնում է 6,47 հա, իսկ 16-րդ հողամասը՝ 4.6 հա տարածք, ընդամենը՝ 11,07 հա:

Նախատեսվող գործունեության տարածքը՝ ամենամոտ բնակելիից՝ Գագարինից գտնվում է 443,7 մ, իսկ Վարսերից՝ 2.912 մ, Գեղամավանից՝ 1.565 մ, Սևան քաղաքից՝ 5,120 մ հեռավորությունների վրա:

Տարածքը Սևանա լճից գտնվում է 7.6 կմ, միջպետական ավտոճանապարհից 1907,7 մ, տեղական ավտոճանապարհից՝ 82,6 մ, մոտակա գործող արևակայանից՝ 1,2 կմ, մոտակա երկաթգծից՝ 55 մ, մոտակա արտադրական շինությունից 50 մ հեռավորությունների վրա:

Ֆոտովոլտային կայանի տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝

Հս. լայն. 40°32'50.40"N, Արլ. երկայն. 44°51'54.47"E

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքները գտնվում են Սևանի լեռնաշղթայի հյուսիս-արևմուտքում, ծովի մակերևույթից 1925 մ բացարձակ բարձրության վրա:

Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են 5.0 մ-ից ցածր հորիզոններում, ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Տարածքում գերակշռում են տափաստանային, կարբոնատացված գորշ հողերը, հողաբուսաշերտը բացակայում է, հիմնականում առկա են ավազակավային գրունտներ:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում կարմիր Գրքերում գրանցված բուսատեսակներ, կենդանատեսակներ և կենդանիների բնադրավայրերը բացակայում են, գործունեության տարածքը չի առնչվում պատմամշակութային, բնության հուշարձանների հետ, գործունեության տարածքը անտառածածկ չէ, բացակայում է ծառաթփային բուսականությունը, առկա է խոտածածկ:

Համաձայն տրված լիցենզիայի նախատեսվում է կառուցել 10200կՎտ հզորության արևակայան, իսկ տեխնիկական պայմանի՝ 10000կՎԱ հզորության 110/35 կՎ լարման և համապատասխան հզորության 35/0,8 կՎ ենթակայաններ: 110/35 կՎ ենթակայանը նախատեսվում է միացնել «Ախթամար» 110 կՎ ՕԳ-ի՝ «Գագարին» ենթակայանի ճյուղավորման վերջին հենարանից Գ 9826 110/10կՎ ենթակայանը սնող 110կՎ լարման օդային գծի N4 խարսխային հենարանին՝ կառուցելով 40 մ երկարության կտրվածքի օդային գիծ, իսկ 35/08 կՎ ենթակայանը միացնել 110/35կՎ ենթակայանի 35կՎ ԲՍ-ին կառուցելով 255 մ երկարության 35 կՎ մալուխային գիծ

Համաձայն հայտի նախատեսվում է.

Արևային կայան՝ 9,240 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Արևային ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են երկու հողամասերում: Առաջին հողում կտեղադրվեն 6942, երկրորդում 9568 ընդհանուր՝ 16510 հատ ֆոտովոլտային վահանակներ: ՖՎ վահանակների զբաղեցրած մակերեսը կազմելու է 5.2 հա: Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 16510 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 575Վտ առավելագույն հզորությամբ: 27 հատ՝ 330կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստները մալուխներով կմիանան ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Արևակայանի կառուցման համար ընտրվել են JKM575N-72HL4-BDV մակնիշի արտադրության 22.26% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 575 Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ: Փոխակերպիչները կլինեն Huawei արտադրության, մոդելը՝ SUN2000-330KTL-H2 330կՎտ ելքային հզորության: Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա, փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները՝ կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ:

7-րդ հողամասում նախատեսվում է կառուցել 2 հատ տրանսֆորմատորային ենթակայաններ:

N1 ենթակայան՝ նախատեսվում է 9000 կՎա հզորությամբ 35/0,8 կՎ լարման, որում կգտնվեն արևային կայանի արտադրանքը և 35 կՎ մալուխագծով կտեղափոխվի և կմիանա 110/35 կՎ ենթակայանին, որից 110 կՎ ՕԳ-ով կմիանա 110 կՎ «Ճ. Աղթամար» օդային գծի N2 հենարանին: Ենթակայանի մակերեսը կկազմի 75,6 քմ:

N2 ենթակայանը նախատեսվում է տեղադրել 10000 կՎա հզորության, 110/35 կՎ լարման, որի սնումը նախատեսվում է իրականացնել մեկ 110 կՎ օդային գծով: 110 կՎ ԲԲՍ-ն նախատեսված է բաց տիպի: Հաղորդադրողավորումը կիրականացվի AC-70/11 տիպի պողպատայումինե հաղորդալարով:

N1-N2 ենթակայանների միջև հատվածի համար նախատեսված է 35 կՎ, 255 մ երկարության մալուխագիծ, որից 15 մ-ը նախատեսված է կոնստրուկցիայով, 240 մ-ը՝ խրամուղով: Մալուխագիծը N1 ենթակայանից կմիանա խրամուղով մինչև N2 ենթակայան: Մալուխի անցկացման խորությունը նախատեսված է 1 մ, որը կտեղադրվի խրամուղու մեջ, այնուհետ կծածկվի ավազե շերտով, որից հետո կտեղադրվի ե/բ սալ և կծածկվի ավազակոպիճով:

Ավտոճանապարհները հատելիս մալուխը կանցկացվի պոլիէթիլենային խողովակի մեջ անցկացված:

N2 ենթակայանից պորտալից 110կՎ օդային գիծը մեկ թռիչքով՝ 40 մ կմիանա գոյություն ունեցող 110կՎ ՕԳ հենարանին: Նոր 110կՎ հենարան չի տեղադրվում:

110 կՎ ԲԲՍ-ում տեղադրված սարքավորումների կայծակի հարվածներից պաշտպանության համար նախատեսվում է տեղադրել 1 հատ շանթարգել մուտքային պորտալի վրա և 1 հատ առանձին կանգնած շանթարգել՝ 15մ բարձրությամբ: Ենթակայանի ամբողջ տարածքը մտնում է շանթարգելների պաշտպանիչ գոտու մեջ:

Արևակայնի համար նախատեսված է՝ կրակմարիչեր և հրդեհաշիջման վահանակ, օպերատորական, պահեստային շինություն, արտաքին լուսավորություն և տեսահսկում, ցանկապատում, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է հայտի համապատասխան բաժիններում:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվող ջուրը տարածք կբերվի ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի, խմելու ջուրը կբերվի պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի:

Կառուցման աշխատանքների ավարտից հետո նախատեսված է իրականացնել տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում, փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

Կայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված կլինեն՝

- կայանի և ենթակայանի աշխատանքների ընթացքում օդային ավազան արտանետումների,
- ջրային և հողային ռեսուրսների օգտագործման,
- լանդշաֆտի, կենդանական և բուսական աշխարհի փոփոխությունների,
- շինարարական թափոնների, կայանի աշխատանքի ընթացքում և ապամոնիտաժումից հետո առաջացող թափոնների կառավարման,
- արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:



Շինարարության փուլում գործունեության իրականացման հետևանքով հնարավոր են՝ մթնոլորտ արտանետումներ՝ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով, օդային ավազանի աղտոտում կլինի միայն շինարարության ընթացքում ինչը կկրի կարճաժամկետ, ժամանակավոր բնույթ:

Քանի որ տարածքում մակերևութային ջրահոսքերը բացակայում են շինարարության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի կանխատեսվում:

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջերի հեռացման համար կտեղադրվի շարժական բիոզուգարաններ՝ լվացարանով, իսկ շահագործման փուլում աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվեն սանհանգույց (բիոզուգարան), մաքրումը կիրականացվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Արևային կայանի կառուցման ժամանակ կիրականացվեն հողային և շինարարական աշխատանքներ, հողի գրունտի քանդման աշխատանքները կիրականացվեն՝ մեխանիզմներով և ձեռքով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ:

Ենթակայանի և մալուխագծերի անցկացման համար կփորվի մոտ 100 մ³ գրունտ, որից մոտ 75 մ³ կօգտագործվի որպես հետլիցք, մնացած մոտ 25 մ³ հողային գրունտը կհեռացվի համայնքի կողմից հատկացված վայր: Արևակայանի կառուցման աշխատանքների ընթացքում կիրականացվի՝ վահանակների կոնստրուկցիաների հիմքերի համար հորատանցքեր՝ 950 մ³, որից 100 մ³ ետլիցք, լուսավորության հենասյունների ցանկապատի համար 60 մ³ փոսորակ, որից 10 մ³ ետլիցք, մալուխների խրամուղիների համար՝ 410 մ³ փոսորակ, որից 320 մ³ ետլիցք: Ընդամենը կհանվի 1520 մ³ հողային գրունտ, որից 505 մ³ կկատարվի հետ լիցք, մնացած 1015 մ³ կհեռացվի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարության փուլում կառաջանան թափոններ որոնցից են՝ մալուխների, հաղորդալարերի մնացորդներ, չտեսկավորված սև մետաղներ պարունակող թափոններ, չտեսկավորված ալյումինե ջարդոն, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար, յուղոտված լաթեր, շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինարարական աղբի տեսքով, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսկավորված աղբ, որոնք պատկանում են վտանգավորության 3-4-րդ դասերին: Թափոններ քանակի, վտանգավորության աստիճանի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվության համապատասխան բաժիններում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված կլինի շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Նախատեսվող գործունեության տարածքը բնակավայրերից գտնվում է բավական հեռավորության վրա, ուստի աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակչության վրա, իսկ շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթից ելնելով աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կկրի կարճատև և ժամանակավոր բնույթ: Տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման

պատճառով հնարավոր է որոշ կենդանիների տեսակների հեռացում այդ տարածքներից, ինչը սակայն կկրի ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝

Օդային ավազան հնարավոր արտանետումների ազդեցությունը նվազեցնելու համար՝

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան՝ ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխում փակ ծածկ ունեցող մեքենաներով, նյութերը տեղափոխող մեքենաների փակում անջրթափանց թաղանթով, տարածքում նյութերի պահում ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,

- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցների օգտագործում միայն սարքին վիճակում, պարբերաբար ստուգումներ իրականացում և այլն:

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում են.

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածի կուտակում տարածքում և ծածկում անջրթափանց թաղանթով,

- մալուխագծերի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածի կուտակում անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,

- հողային զանգվածն օգտագործում անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,

- ճանապարհի ջրցանի և գրունտի խոնավեցում այնպես իրականացում, որը չի առաջացնի մակերևութային հոսքաջրեր,

- շինարարության ընթացքում գոյություն ունեցող գրունտային ճանապարհները օգտագործում,

- շինարարական նյութերի տեղադրում հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կկայանում գրունտային ճանապարհի վրա,

- շինարարական տեխնիկայի, լիցքավորում և սարքավորումների վերանորոգում ի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- շինհրապարակում պլաստմասե տարանների տեղադրում՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,

- ջրցանի և փոշենստեցման մեքենաների անիվների լվացման համար տեխնիկական որակի ջրի օգտագործում,


- ճանապարհների ջրցանն իրականացում տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխում աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդի բերում պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի և այլն:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում են.

- խուսափում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից, նյութերի մնացորդների (մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) հավաքում հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխում,



անհրաժեշտության դեպքում դրանց հանձնում համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- շինարարական թափոնների՝ շինադքի, բետոնի մնացորդների, հավաքում պարկերի մեջ և պարբերաբար կտեղափոխում համայնքի կողմից հատկացված վայր և այլն:

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում են .

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժ ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան միայն սարքին վիճակում օգտագործում,
- տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում, տրանսպորտային միջոցների շարժիչների, կարգաբերում և այլն:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր են բացասական ազդեցություններից են.

Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ առաջացող վտանգավոր թափոնները, որոնցից են՝ հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր, յուղոտված լաթեր, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ, յուղերով աղտոտված ավազ, մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի, այլումինե, պղնձե:

Թափոնների ծածկագրերի, վտանգավորության դասի, քանակների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է հայտի համապատասխան բաժիններում:

Որոշակի աղմուկի ավելացում կնկատվի շահագործման ընթացքում ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական և քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

Արևային էլեկտրակայանի կառուցման արդյունքում տարածքի մի մասը կծածկվի արևային մոդուլներով և կստվերի հողի զգալի մասը: Մասնակիորեն լուսավորված տարածքներում հնարավոր է բուսական նոր համակեցությունների՝ տեղաբնիկ ստվերասեր բույսերը առաջացում, որոշակիորեն նաև բուսատեսակների առկա տեսակային կազմի պահպանում:

Օդային ավազանի վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում:

Շահագործման փուլում նախատեսվում է շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, որոնցից են՝

Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է .


- աշխատողների համար խմելու ջրի մատակարարում պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով սանհանգույց (բիոզուգարան) տեղադրում, բիոզուգարանների մաքրում մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- արևային կայանի պանելների մաքրումը՝ բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի ջրի փակ բաք:

Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է գործունեության վայրում ազատ տարածքում խոտածածկ հատվածների հնարավորինս պահպանում:

Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է .

- կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով տարածքի գիշերային լուսավորության հնարավորինս նվազեցում:

Շահագործման փուլում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու համար նախատեսված են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝



- 2 հատ յուղընդունիչների (հոր)՝ կառուցում՝ տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերի հավաքում համապատասխան տարրաների մեջ և հանձնում մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում spill kit կոչված ներծծիչ կտորներ կիրառում, որոնք հնարավորություն կտան արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդների, յուղերով աղտոտված ավազի, սև և գունավոր մետաղի ջարդոնի հանձնում հանձնում մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- յուղերով աղտոտված ավազի հանձնում մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, սև և գունավոր մետաղի ջարդոնի հանձնում մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում կառաջանան վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը կկուտակվեն տարածքում՝ 7 մ² փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-տնակում:

Ներկրված արևային կայանի պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ կվերադարձվեն արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի Հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կկուտակվի պոլիէթիլենային պարկերի մեջ և ամեն օր կտեղափոխվի աշխատողների կողմից:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չի առաջանալու:

Շինարարության և շահագործման փուլերում նախատեսված են հնարավոր արտակարգ իրավիճակների, անվտանգության, աղմուկի և թրթռման, մարդու առողջության և աշխատանքի կազմակերպման, սոցիալական, անվտանգության, պատմամշակութային և բնության հուշարձանների, կենսբազմազանության և լանդշաֆտի պահպանության համար մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Արևակայանի և ենթակայանի տարածքում կանաչապատման աշխատանքները կիրականացվի խոտի ցանքսի տեսքով՝ խախտված տարածքների վերականգնման նպատակով:

Ըստ գնահատման հաշվետվության բնապահպանական կառավարման պլանով նախատեսված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու, վերահսկելու համար կիրականացվի նաև մշտադիտարկումներ՝ ուղղված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանը, որոնցից են՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների հսկողություն, համապատասխան մասնագետների ստուգայցեր, բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն, անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում, շինարարական և



անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանում, շին տեխնիկայի և մեքենաների

համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով և այլն:

Համաձայն հայտի բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը/հազ. դրամ ներառված է շինարարական աշխատանքների արժեքում:

Պարճառարանական մաս. Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:


Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Գագարին բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Մասնակիցների կողմից կարևորվել է նախատեսվող աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Անհարժեշտ է շինարարության և շահագործման փուլերում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
2. Ազդակիր բնակավայրում ապահովել նախատեսվող սոցիալական ծրագրերի իրականացումը:
3. Մինչ նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացումը՝ անցկացվող մալուխագծերի ճանապարհի հետ հատման լուծումները համաձայնեցնել համապատասխան կառույցների կամ մարմինների հետ:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:



Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

5. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:

ԵԶՐԱՓՈՒԿ ՄԱՍ

«ՍՈՒՆՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան